ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

Ա. ՋԱՎԱԽՅԱՆԻՆ, Ս. ՄԿՐՏՉՅԱՆԻՆ, Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 04.06.2019թ. հ.01/267 գրության՝ տեղեկացվում է, որ Երևանի ենթակայության մանկապարտեզներում լրացուցիչ վճարովի ծառայության միջոցով երեխաներին պահելու տևողության երկարացման խնդիրը հնարավոր է կարգավորել ծնողի և հաստատության միջև կնքված պայմանագրով:

Համաձայն ՀՀ ԱՆ նախարարի 2013թ. հ.42-Ն հրամանի՝ երեխայի սննդի ընդունման միջև ընկած ժամանակահատվածը սահմանվում է ոչ ավելի, քան 3.5-4 ժամ, ինչպես նաև 8-10.5 ժամյա տևողությամբ գործող մանկապարտեզներում սննդի օրաբաժնի էներգետիկ արժեքի հաշվարկի մեջ չի ներառվում ընթրիքը:

Միաժամանակ տեղեկացվում է, որ մանկապարտեզներում օրվա երկրորդ կեսի աշխատանքի կազմակերպման համար ժամը հավելելու նպատակով անհրաժեշտ են կրկնակի հաստիքներ և հավելյալ դրույքաչափեր, որոնց վարձատրության համար պահանջվում է լրացուցիչ ֆինանսավորում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ